

Այս տեղեկատվական թերթիկը պարունակում է անվտանգության վերաբերյալ կարևոր տեղեկություններ, որոնք անհրաժեշտ է իմանալ նախքան գոլեդրոնաթթվի (Ջոմետա) ներարկումներով տարատեսակ ուռուցքների ոսկրային մետաստազների պատճառով առաջացած կմախքային բարդությունները կանխելու կամ հետաձգելու համար բուժումը սկսելը և բուժման ընթացքում:

## ԾՆՈՏԻ ՕՍՏԵՈՆԵԿՐՈՉ

Բժիշկը Ձեզ խորհուրդ է տվել ստանալ գոլեդրոնաթթվի (Ջոմետա) ներարկումներ:

Ջոլեդրոնաթթվի (Ջոմետա) ներարկումներ ստացող պացիենտների շրջանում ծնոտի օստեոնեկրոզ (ծնոտի ոսկորների ախտահարում) կոչվող կողմնակի ազդեցությունը հազվադեպ է հանդիպել:

Ծնոտի օստեոնեկրոզի զարգացման ռիսկը նվազեցնելու համար անհրաժեշտ է ձեռնարկել մի շարք նախազգուշական միջոցառումներ:

### Նախքան բուժումը սկսելը.

- Խնդրեք բժշկին պատմել Ձեզ ծնոտի օստեոնեկրոզի մասին նախքան բուժումը սկսելը:
- Տեղեկացեք բժշկից՝ արդյոք անհրաժեշտ է անցնել ատամնաբուժական հետազոտություն նախքան գոլեդրոնաթթվով (Ջոմետա) բուժումը սկսելը, ինչպես նաև, տեղեկացրեք Ձեր ատամնաբույժին, որ պատրաստվում եք գոլեդրոնաթթվով բուժում սկսել:
- Տեղեկացրեք Ձեր բժշկին/բուժքրոջը (առողջապահության ոլորտի մասնագետին), եթե առկա է բերանի խոռոչի կամ աստաճների հետ կապված որևէ խնդիր:

Այս նյութը մշակվել է Նովարտիս ընկերության կողմից՝ որպես Ջոմետա դեղի ռիսկերի նվազեցման ծրագրի մաս: Այն

նախատեսված չէ գովազդային նպատակներով օգտագործելու համար:


Չումետա դեղը կիրառող պացիենտների համար նախատեսված տեղեկատվությանը կարող եք ծանոթանալ՝ անցնելով հետևյալ հղումը. [http://pharm.cals.am/pharm/drug\\_images/index.php](http://pharm.cals.am/pharm/drug_images/index.php)

Ծնոտի օստեոնեկրոզի զարգացման հնարավոր ռիսկն ավելի բարձր է այն պացիենտների շրջանում, որոնք ունեն լնդերի հիվանդություններ, կատարվել է ատամի հեռացում: Վերոնշյալ ռիսկն առավել հավանական է նաև ծխողների և քաղցկեղի դեմ տարբեր բուժումներ ստացող անձանց շրջանում:

### **Բուժման ընթացքում.**

- Դուք պետք է լավագույնս պահպանեք բերանի խոռոչի հիգիենան: Համոզվեք, որ Ձեր ատամնապրոթեզը ճիշտ է տեղադրված, և կանոնավոր ատամնաբուժական ստուգումներ անցեք:
- Տեղեկացրեք Ձեր բժշկին և ատամնաբույժին, որ զոլեդրոնաթթվով (Չումետա) բուժում եք ստանում, եթե ատամնաբուժական միջամտության եք ենթարկվում կամ պատրաստվում եք ատամնաբուժական վիրահատության (օրինակ՝ ատամի հեռացում):
- Անմիջապես տեղեկացրեք Ձեր բժշկին և ատամնաբույժին բերանի խոռոչի կամ ատամների հետ կապված որևէ խնդրի առաջացման մասին, օրինակ՝ ատամների թուլացում, ցավ կամ այտուց, չբուժվող վերքեր կամ արտադրություն, քանի որ դրանք կարող են լինել ծնոտի օստեոնեկրոզի նշաններ:

Չումետա դեղը կիրառող պացիենտների համար նախատեսված տեղեկատվությանը կարող եք ծանոթանալ՝ անցնելով հետևյալ հղումը. [http://pharm.cals.am/pharm/drug\\_images/index.php](http://pharm.cals.am/pharm/drug_images/index.php)



Լրացուցիչ տեղեկությունների համար խնդրում ենք կարդալ դեղի ներդիր-թերթիկը: Տեղեկատվությունը նախատեսված է միայն

առողջապահության ոլորտի մասնագետների համար: Հրապարակվել է ռիսկերի կառավարման ծրագրի շրջանակներում: Չի հանդիսանում գովազդ: Առողջապահության ոլորտի մասնագետները կողմնակի ազդեցությունների մասին կարող են հաղորդել ՀՀ ԱՆ ակադեմիկոս Է. Գաբրիելյանի անվան դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն՝ [www.pharm.am](http://www.pharm.am) հղումով, գրել [vigilance@pharm.am](mailto:vigilance@pharm.am) էլ. հասցեին կամ զանգահարել թեժ գծի հեռախոսահամարով՝ (+374 10) 20 05 05, ինչպես նաև կարող են գրել Նովարտիս ընկերության [drugsafety.cis@novartis.com](mailto:drugsafety.cis@novartis.com) էլ. հասցեին:

«ԱՍՏԵԴԻԱ» ՍՊԸ,

ՀՀ-ում «Նովարտիս Ֆարմա ԱԳ» ընկերության ծառայությունների  
մատակարար  
Հասցե՝ 0051, Նաիրի Զարյան 72/3, Երևան, ՀՀ

691174/ZOM/A4/11.2023/200